ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

1. Ժամանակակից տեղեկատվական համակարգերի արդյունավետ կիրառում հեռակա ուսուցման համակարգում:

1.1 Հեռակա ուսուցման համակարգում դասավանդվող առարկաների դասախոսությունների էլեկտրոնային տարբերակների շտեմարանների ստեղծում:

1.2 Հեռակա ուսուցման բաժնում դասավանդող դասախոսների էլեկտրոնային փոստի առկայություն՝ ուսանողների հետ շարունակական կապի ապահովման նպատակով:

1.3 Մասնաճյուղի գրադարանում էլեկտրոնային գրադարանային ֆոնդի ընդլայնում (մասնագիտական ամբիոնների կողմից ներկայացնել էլեկտրոնային գրանադարանային ֆոնդի անհրաժեշտ ցանկ):

2. Կուրսային և ավարտական աշխատանքերի թեմաներին տալ առավելապես արդիական և գիտագործնական բնույթ:

2.1 Հասցեական դարձնել տարբեր հիմնարկ-ձեռնարկուություններում աշխատող ուսանողների կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների ընտրությունը (կրթության ոլորտ, իրավապահ, բանկային համակարգ և այլն):

2.2 Համանման տրամաբանությամբ իրականացնել նաև զանազան պրակտիկաներ:

3. Ուսման առաջադիմությունը խթանող գործոնների կիրառում (վարձավճարների գործող կանոնակարգում զեղչերի վերանայում):

3.1 Կիսամյակի արդյունքներով բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների աշխատավայրեր ուղարկել շնորհակալական գրություններ:

3.2 Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների քննակարգի վերանայում: